

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ

ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՅԱՇԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՅՈՐՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA

"ASTICHAN" LLC

EXPERTISE OF DESIGN AND ESTIMATE
DOCUMENTS AND TECHNICAL QUALITY
CONTROL OF CONSTRUCTION

ՀՀ ք. Երևան, Թումանյան 32/1
32/1 street Tumanyan, Yerevan RA

Հեռ./Մոբ. (+374) 98-80-00-80, 044-84-00-70
E-mail: astichan_ltd@mail.ru

ԼԻՑԵՆԶԻԱ/LICENSE ՔՊԼ 002308

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

№ 31/26



« » « » 2026թ.

Հաստատում եմ
«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

[Signature]

Հ. Անդրեասյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Տաթևի բնակավայրի
Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տանող
ճանապարհի ասֆալտապատում հատվածի շինարարության
ՊԿ3+88»

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ՝ Սյունիքի մարզպետարան

ՆԱԽԱԳԾՈՂ՝ «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ 2026

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիսի բնակավայրի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում հատված ՊԿ0+00-:ՊԿ3+88» նախագծա-նախահաշվային փաստաթղթերի

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման համար հիմք են հանդիսացել՝

- Տեխնիկական առաջադրանքը:
- Տեղում կատարված ուսումնասիրությունները, չափագրումները և լուսանկարահանման աշխատանքները:

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ 2 ալբոմով՝

- Ալբոմ 1 Աշխատանքային նախագիծ
- Ալբոմ 2 Նախահաշիվ

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիսի բնակավայրի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում հատված ՊԿ0+00-:ՊԿ3+88 նախագծային աշխատանքները իրականացվել է Կապան համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի:

Ներկայացված տեղամասի հետախուզական աշխատանքները իրականացվել են փետրվար ամսին:

Հիմնանորոգվող տեղամասի երկարությունը՝ -388մ է:

Նախագծվող ճանապարհահատվածը անցնում է Հարժիս բնակավայր վարչական տարածքով և հիմնականում 2 կողմից սահմանափակված է ցանկապատերով և բնակելի շինություններով:

Նախագծային աշխատանքները կատարվել են ՀՀՇՆ 32-01-2022, ՀՀՇՆ30-01-2023 նորմաների և պահանջների համաձայն, AutoCad համակարգչային ծրագրով:

Ըստ տեխնիկական առաջադրանքի պահանջվում է ճանապարհի պարամետրերը /երթևեկելի մասի, կողնակների լայնությունները/ թողնել անփոփոխ, իրականացնել միայն վերականգնման աշխատանքներ:

Նախագծման ընթացքում ընտրված են հետևյալ հիմնական տեխնիկական ցուցանիշներ.

- Շարժման արագությունը - 60 կմ /ժամ
- Ճանապարհների կարգը անփոփոխ
- Երթևեկելի մասի լայնությունը - ընդունված է պահպանելով գոյություն ունեցող /առկա են շենքեր, շինություններ և սեփականաշնորհված տարածքներ
- Շարժման գոտիների քանակը՝ երկու

Հիմնվելով ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա, նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Համահարթեցնել հողային պաստառը
- Վերականգնել ճանապարհային պատվածքը
- Իրականացնել ջրահեռացման համակարգ
- Իրականացնել ճանապարհի կահավորում:

ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ

Հետախուզական աշխատանքների ժամանակ կատարվել է տախիոմետրական հանույթ 1:1000 մասշտաբի:

Հատակագծում հորիզոնական կորերի շառավիղներն ընտրված են հաշվի առնելով երթևեկելի մասի անփոփոխ մնալու պահանջը:

Երկայնական կտրվածքում կատարված են մասնակի երկայնական թեքությունների ուղղում:

Հողային պաստառից մակերևույթային ջրերի հեռացում իրականացնել:

Նոր ա/բ ծածկի տեղադրումից հետո իրականացնել երթևեկության անվտանգության կազմակերպման աշխատանքներ:

ՀՈՂԱՅԻՆ ՊԱՍՏԱՌ

Նախագծում ընդունված հողային պաստառի կոնստրուկցիան և տիպերը բավարարում են գործող նորմերին և պահանջներին:

Տեղանքի ռելիեֆի պայմաններից և բնահողերի բնութագրերից ելնելով հողային պաստառի կայունությունը հնարավոր է ապահովել կառուցման կանոնների և ջրահեռացման պահանջների պահպանման դեպքում:

ՃԱՆԱՊԱՐԶԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔ

<<Արմատրոյ>> ՍՊԸ-ի մասնագետների կողմից կատարվել է վեր նշված ճանապարհահատվածի գոյություն ունեցող ծածկի ուսումնասիրություն և ըստ պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի նախատեսվել է իրականացնել նոր պատվածք որի կոնստրուկցիան հետևյալն է.

- Մանրահատիկ ա/բետոն h=5սմ
- խճային հիմք h=15սմ բիտումի տարածումով 4,12/1000մ2
- Ավազակոպճային հիմք h=12սմ

Ճանապարհին հարող մուտքերում և իջատեղերում իրականացված է նոր պատվածք

- Մանրահատիկ ա/բետոն h=5սմ
- խճային հիմք h=15սմ բիտումի տարածումով 4,12/1000մ2

Իջատեղեր եւ մուտքեր

Հիմնանորոգվող տեղամասը հարակցում է իջատեղեր և մուտքեր, որտեղ նախատեսվում է իրականացնել հետևյալ տիպի պատվածք.

- Մանրահատիկ ա/բետոն h=5սմ
- Խճային շերտ h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ2

Կողային առուների և իջատեղերի, մուտքերի հարակցման տեղամասերում նախատեսվում է Փ-325մմ մետաղական խողովակների տեղադրում

Բեճուճա վաթեր

Երթևեկելի մասից ջրահեռացումը իրականացնելու համար նախատեսվում է իրականացնել 30x34սմ բետոնյա վաթերով:

ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Երկայնական կտրվածքում գոգավոր կորի տեղամասում, որտեղ հավաքվում են հակադիր երկու ուղղությամբ հոսող թե մակերեսային թե վաթերի ջրերի հոսքը նախատեսվում է Փ-530մմ տրամագծով մետաղական խողովակների կառուցում, ջրընդունիչ և ջրհավաք հորերով:

Նախատեսվում է նաև պատյանների կառուցում հետագա ինժեներական կառուցվածքների անցկացման համար ճանապարհային ծածկին չվնասելու համար:

ՄԱՅԹԵՐ

Հետիոտնի անվտանգ շարժման համար նախատեսվում է դպրոցի կողմից մայթ՝ 1,0մ լայնությամբ, մբ բազալտե 15x30սմ չափի եզրաքարեր բետոնե 10x20սմ չափի եզրաքարեր:

Հաշմանդամների շարժման համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներից է թեքահարթակների իրականացումը թվով:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Նախագիծը կազմված է ՀՀ նորմաների և պահանջներին համապատասխան, որից ելնելով մշակված են կոմպլեքս միջոցառումներ երթևեկության անվտանգությունը ապահովելու համար:

Երթևեկության անվտանգության և վարորդի կողմնորոշման համար նախագծով նախատեսված է տեղադրել ճանապարհային նշաններ և կատարել ճանապարհի գծանշում, որոնք ներկայացված են համապատասխան ամփոփագրերում և փոված հատակագծում 1:1000մասշտաբի:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

Այն տեղամասերում, որտեղ բացակայում են ճանապարհային նշանները, նախատեսվում է տեղադրել ԳՈՍՏ Ռ 52290-2004-ի:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆՇԱԳԾՈՒՄ

Նախագծով նախատեսված է իրականացնել ճանապարհի երթևեկելի մասի գծանշում ռեֆլեկտորային ներկով ըստ նորմերի:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարության արտադրության կազմակերպումը պետք է իրականացնել համաձայն ՀՀՇՆ I-3. 01. 01-2008 շինարարական նորմերի:

ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՄԱՍ

Ամփոփ նախահաշիվը կազմում է **70 679 120 (յոթանասուն միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար հարյուր քսան)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Նախահաշիվը կազմված է 2026թ. № 02 փետրվար ամսվա տեղեկագրի հիման վրա:

- ✓ **Տրանսպորտային ծախսեր 12.90%**
- ✓ **Այլ ծախսեր 5%**
- ✓ **Պահեստավորման ծախսեր 2%**

Աշխատավարձի գործակից 2763.50

Մեքենաների և սարքավորումների շահագործման գործակից 3053.76

Ուղղակի ծախսերի վրա հաշվարկված են.	
Վերադիր ծախսեր	13.3%
Շահույթ	11.0%
Ամփոփ նախահաշվում հաշվի են առնված հետևյալ ծախսերը	
Ժամանակավոր շենքեր և շինություններ	1.8%
Կլիմայական պայմանների ազդեցությունը	0.7%
Ոչ ընթացիկ աղբի տեղափոխում	0.15%
Չնախատեսված ծախսեր	6 %
Տեխնիկական հսկողություն	1.8 %
Հեղ. հսկողություն	0.6 %
ԱԱՀ	20.0 %

Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային լուծումների առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին:

4. Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանով ամրագրված պահանջներին:

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ մեկտեղ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ☒ Նախագիծը երաշխավորվում է 70 679 120 (յոթանասուն միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար հարյուր քսան) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:
- ☒ Ուսումնասիրելով «ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիսի բնակավայրի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում հատված 740+00-743+88» «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ փորձաքննությունը եզրակացնում է. «ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ»:

Փորձագետ՝ 1-ին կարգի հավաստագրված մասնագետ

Ս.Ղազարյան

